

**ՔՐՈՆՈՏՈՊԻ ՊԱՐԱԴՈՔՍԱԼՈՒԹՅՈՒՆԸ ԱՏԵՌՆԻ
«ՏՐԻԱՏՐԱՄ ՇԵՆԴԻ»-ՈՒՄ: ԱՅՆՇՏԱՅՆԻ
ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱԿԱՆ
ԶԱՓԱՇԽԱՐՀՈՒՄ**

Գիտական և գրական հայտնագործությունների միջև անշուշտ կա որոշակի հարաբերակցություն: Յուրաքանչյուր դարում գեղարվեստական ձևերի կազմակերպման եղանակներն արտացոլում են տվյալ դարաշրջանի գիտական և գեղարվեստական նվաճումները կամ հեռանկարները: Օրինակ, ըստ Ումբերտո Էկոյի, բարոկկոյի գեղագիտական մորարարություններն արտացոլում էին տիեզերքի հենց կոպեռնիկոսյան հասկացողությունը, հրաժարունը երկրակենտրոն կազմվածքից¹: Կարծես պաշտպանելով այդպիսի ընկալումը՝ Ռոբերտ Նադոն իր «Ընթերցումներ բնության մասին մոր գրքից. ֆիզիկան և մետաֆիզիկան ժամանակակից վեպում» գրքում ենթադրում է, որ Նյուտոնյան աշխարհը սահմանում է XVIII դարի վեպի և՛ ձևը, և՛ նրանում ֆիզիկական իրականության կազմակերպման եղանակը: Այս ելակետից նա այս հետևությունն է անում. «Վիպասանները, ինչպես և Նյուտոնը, կարծում էին, որ տիեզերքը սուբստանցից զուրկ, դատարկ տարա է, տրամաբանորեն բացարձակ իր տարողության նկատմամբ <...> Օգտվելով որոշ մետաֆիզիկորեն հիմնավորված վարկածներից՝ XVIII դարի վիպասանները կերտում էին կերպարներ, որոնք վեպի ողջ տարածության միջով անցնելով փոխվում են ամենից առաջ որպես այլ, արտաքին սուբստանցիաների հետ փոխազդեցության գործառնությ, իսկ ժամանակը պատկերում էին որպես «ինչ-որ տեղ» գիտակցությունից դուրս գոյություն ունեցող երևույթ»²: Ժամանակը ժամացույցն է, օրացույցը, այն առարկայական է, բացարձակ, մի ուղղությամբ ընթացող: Մի ուղղությամբ է ընթանում նաև XVIII դարի վեպի սյուժեն՝ անցյալից ներկա, ներկայից ապագա: Հերոսն ու հեղինակը մույնպես բացարձակ են. հերոսն անբաժանելի է՝ ինչպես հին հասկացողությամբ ատոմը, հեղինակին հայտնի է կյանքի ողջ մեխանիկան: XX դարն իր հետ բերեց ժամանակի ու տարածության մասին մոր պատկերացումներ, որոնք սասանեցին վեպի այդպիսի համակարգը: Այսպես է զարգացնում իր եզրակացությունները Նադոն:

¹ Eco Umberto. The Open work. Harvard univ press. Cambridge, 1989.

Այս պնդումներին արծագանքում է Վալենտինա Դիանովան իր «Արվեստի պոստմոդերնիստական փիլիսոփայությունը. աղբյուրներ և այժմեականություն» ("Постмодернистская философия искусства: истоки и современность." 2000) աշխատությունում: Համաձայնվելով նման տեսանկյան հետ՝ Դիանովան, այդուհանդերձ, ներկայացնում է մեկ այլ դիտանկյուն: Նա նշում է, որ արվեստագետի ստեղծագործությունում հաճախ կարելի է նկատել հարացույցի (պարադիգմայի) փոխարինմանը նպաստող գիտական հայտնագործությունների տարրեր: Գիտակցաբար թե ենթագիտակցաբար՝ արվեստագետը միաժամանակ հանդիսանում է նաև գիտնական: Որպես օրինակ նա բերում է այն փաստը, որ մարդու մարմնի կազմախոսական ուսումնասիրությունը սկսել են ոչ թե պրոֆեսիոնալ բժիշկները, այլ նկարիչները, մասնավորապես՝ Լեոնարդո դա Վինչին:

Ինչ վերաբերում է գիտական ու գեղարվեստական նվաճումների հարաբերակցությանը, հետաքրքրական է Լայբնիցի տեսակետը: Նա արվեստը դիտում է որպես գիտական մտքի նախնական աստիճան՝ փոքր ու մութ պատկերացումների ոլորտ⁴: Մինչ ընդունելի հանդուրժողականությամբ է առանձնանում Այնշտայնի այն միտքը, որ արվեստագետը, տեսականացնող փիլիսոփան, բնախույզը յուրովի են զբաղվում աշխարհի հասարակ և պարզ պատկերի կերտմամբ⁵: Այսպիսով, Այնշտայնը ոչ մի առավելություն կամ առաջնորդություն չի վերագրում գիտական բնագավառին: Կարճ ասած՝ վերջին խոսքը գիտությանը չէ:

Տվյալ տեսքտային վերլուծությամբ, որում գերակայում է ակտիվ (ընթերցողական) մեկնաբանությունը, «Տրիստրամ Շենդի»-ում կփորձենք բացահայտել այնպիսի քրոնոտոպային որակներ, որոնք ավելի հարազատ են ժամանակ/տարածություն կատեգորիաների այնշտայնյան ըմբռնմանը և, հետևաբար, հակադրվում են դրանց նյութոցյան որակավորմանը: Մեջբերենք տարածությանը և ժամանակին Նյուտոնի տված սահմանումները. «Բացարձակ տարածությունն իր բնույթով և արտաքին ազդեցություններից անկախ, միշտ նույնն է մնում և անշարժ» և «Բացարձակ, ճշգրիտ և մաթեմատիկական ժամանակն իր բնույթով և արտաքին ազդեցություններից անկախ հոսում է հավասարաչափ»⁶:

⁴ Вико, Дж. Основания новой науки об общей природе наций. Ленинград, 1940, с. XII.

⁵ Эйштейн А. Собр. научных трудов. В 4-х т., М., Наука, 1967. т. 4. с. 40.

⁶ Newton, Sir Isaac. *Mathematical Principles of Natural Philosophy*. Berkeley: University of California P, 1934. p. 6. (Թարգմ.՝ Կ. 7.)

Լուսավորության ու շրջանի պտուղ «Տրիստրամ Շենդի» վեպը, թերևս, առաջին ոչ գծային պատմողականությամբ կոմպոզիցիա ունեցող ստեղծագործությունն է համաշխարհային գրականության մեջ, ինչն արդեն իսկ ենթադրում է ժամանակի ավանդական ընկալման խաթարումներ ստեղծագործության մեջ: Ստեռնը խառնեց «Տրիստրամ Շենդի»-ի սյուժետային գիծն այնպես, ինչպես Ջոյսը խառնաշփոթեց լեզուները «Ֆինեգանի հոգեհացում»:

Այսպիսով, քննենք Ստեռնի «Տրիստրամ Շենդի»-ում ավանդական քրոնոտոպի աղավաղման բազմաթիվ փորձերից, թերևս, ամենատիպիկն ու ամենահակասականը.

ԳԼՈՒԽ XX

—Ինչպե՞ս կարող էիք, տիկին, այդքան անուշադիր լինել վերջին գլուխը կարդալիս: Այդ գլխում ձեզ ասացի, որ իմ մայրը պապիստ էր:—Պապի՞ստ: Ոչ մի նման բան դուք ինձ չեք ասել, սըր:—Տիկին, թույլ տվե՛ք նորից կրկնել, որ դա ձեզ ասել եմ նույնքան պարզ, որքան բառերն իրենց ուղղակի իմաստով ձեզ կհաղորդեին նման մի բան:—Ուրեմն, սըր, պետք է որ մի էք բաց թողած լինե՛մ:—Ոչ, տիկին, դուք բառ անգամ բաց չեք թողել:—Ուրեմն քնի էի անցել, սըր:—Իմ հպարտությունը, տիկին, ձեզ նման ապաստարան հատկացնողը է:—Ուրեմն, հայտարարում եմ, որ ես այս ամենից ընդհանրապես գլուխ չեմ համու: Դեմք դրա մեջ էլ մեղադրում եմ ձեզ, տիկին, և որպես պատիժ՝ համառորեն պնդում եմ, որպեսզի դուք միանգամից հետ գնաք, այսինքն՝ հերթական վերջակետին հասնելուն պես, և վերստին կարդաք ամբողջ գլուխը ուրից գլուխ:

Ես այդ կնոջն այդպիսի պատիժ նշանակեցի ոչ թե կամակորոթյունից կամ դաժանությունից, այլ լավագույն մտադրություններից դրդվելով. և դրա համար էլ չեմ պատրաստվում նրանից ներողություն խնդրել, երբ վերդառնա—Սի վատ սովորություն պարսավելու համար էր դա, այդ սովորությունը ոչ միայն նրա, այլև հազարավոր այլ մարդկանց մեջ է ստել,—այսինքն՝ դրած կարդալ ավելի շատ արկածների հետևից ընկնելով, քան խորը էրուդիցիայի և գիտելիքի որոնումների մեջ, որոնցով անկասկած լի է այս բակի գիրքը, եթե կարդացվի ինչպես որ պետքն է:—Ընթերցելիս՝ միտքը պետք է վարժվի իմաստուն մտորումներ և հետաքրքրաշարժ եզրափակումներ անելուն, հենց այդ սովորությունն էր, որ դրդեց Պլինիուս կրտսերին պնդել, «որ նա երբեք չի կարդացել այնքան վատ մի գիրք, որից որևէ օգուտ քաղած չլինի»: Դունաստանի և Դեոմի պատմությունները, եթե կարդալ այն ամիրաժեշտ սկզբունքներն անտեսելով,—ավելի քիչ բան կտան, ես հավաստիացնում եմ, քան Պարիզմնուսի և Պարիզմնուսի կամ «Յոթ անգլիական հերոսների» պատմությունները այդ սկզբունքներին հետևելու դեպքում: (չնդագիրը — Կ.Ղ.)

—Բայց ահա և իմ սիրալիր տիկինը: Դուք վերջնթերցեցի՞ք, տիկին, գլուխը, որ խնդրել էի:—Վերջնթերցել եք, և այս կրկնակի ընթերցմամբ դուք

կրկին անգամ չգտա՞ք այն հատվածը, որն արդարացնում է այդ եզրակացությունը:—Ո՛չ մի նման բան⁹

Դրվազը դիտարկենք մի քանի դիտանկյուններից:

Միաժամանակ մի քանի ժամանակային շերտեր են գործում վեպի առաջին հատորի XX գլուխը բացող տվյալ դրվազի պարագայում.

ա) կտրվում ենք տվյալ գլխին նախորդող գլխի պատումից իր ժամանակային և տարածական առանձնահատկություններով հանդերձ. խափանված է անցյալից ապագա ուղղվածությունը:

բ) խոսք ընթերցողի հետ, որի տևողության հարաբերականությունը աչք է զարնում. կինը կարող է մի քանի վայրկյան անց հասնել «հաջորդ վերջակետին», կարող է և՛ մի քանի տարի անց կամ երբեք, և դրանից է կախված տվյալ ընթերցողի կողմից նշված մասի կամ ամբողջ վեպի ընթերցվելու կամ չընթերցվելու ճակատագիրը: Ինքն ընթերցողը, ամենայն հավանականությամբ, չի գնա հետ վերընթերցելու, սակայն վեպը դրան հատուկ ժամանակ է հատկացնում տեքստի ծևով (մեջբերման մեջ՝ շեղագիր)՝ լցնելու, այդ դեպքում, չգիտես թե ում ժամանակը, մինչև տվյալ ընթերցողի «վերադարձը». տեղի է ունենում ժամանակահատվածների բախում: Ժամանակն առնվազն երկատվում է. մի ժամանակային գիծը գնում է վերընթերցման, մյուսը՝ պատումի միջոցով հենց այդ վերընթերցման ժամանակամիջոցը լցնելուն: Մինչդեռ երկուսի տևողությունն էլ խիստ անորոշ է: Սակայն միանշանակ է վերընթերցվող տեքստից հատկացված ժամանակի (շեղագիր տեքստի) ծավալի կախումը, հենց նա է որոշում ժամանակ լցնելու նպատակով կերտվող (կերտված) տեքստի տևողությունը: Երկատվում է նաև ինքը ընթերցողը (լինի կին թե տղամարդ), որոշ դեպքերում ենթարկվում սեռափոխության, շերտատվում է նրա գիտակցությունը. հեղինակի հետ միասին նա շիզոֆրենիկ սպասման մեջ է, սպասելիքը՝ իր՝ *աժիատի* մի մասի վերադարձը: Անձնական իդենտիֆիկացիայի առումով դեպքն, ի՞նչ խոսք, կարելի է դիտարկել նաև պրագմատիկական տեսության ասպարեզում, սակայն մեր խնդիրն այլ է:

Դիտարկենք դրվազն այլ տեսանկյունից.

եթե ընդունենք, որ ընթերցումն ընդհանրապես չնչին բացառություններով ավելի արագ է ընթանում, քան գրելու գործընթացը, ապա, տվյալ դեպքում, ակնհայտ և բնական է միևնույն ժամանակահատվածը զբաղեցրած դիտարկվող տեքստերի միջև երկարությունների մեծ տարբերությունը: Այնուամենայնիվ

⁹ Sterne, Laurence. *The Life and Opinions of Tristram Shandy, Gentleman*. Ed. James A. Work. 1940. Indianapolis: Odyssey, 1979, p. 56. (*Թարգմ.*՝ 4, 7.)

տվյալ տեքստերի ծավալի հավասարության օգտին անալոգիայի միջոցով կարելի է բերել հետևյալ փաստարկները. կետերի բազմությունները ցանկացած երկու [a, b] և [c, d] հատվածներում համարժեք են միմյանց¹¹: 0-1 թվային ինտերվալում կա նույնքան թիվ, որքան ասենք 0-2 թվային ինտերվալում: Իսկ այդ թվային բազմությունն անվերջ է:

Սակայն այլ, միանգամայն անսպասելի պատկեր է բացվում՝ անտիկ ատոմիզմի շրջանակներում մշակված (Դեմոկրիտ, Էպիկուր), XVII դարավերջում Իսահակ Նյուտոնի կողմից գիտականորեն հիմնավորված, իսկ XX դարասկզբում Ալբերտ Այնշտայնի կողմից նոր մեկնաբանություն ստացած տարածություն և ժամանակ հասկացությունների լույսի տակ՝ XVIII դարում կերտված նույն տեքստուալ դիպվածը դիտարկելիս:

Տվյալ դեպքին մոտենում ենք բոլորովին այլ, համեմատած նախորդ դիտարկումներին, առավել վերացական կողմից, կամ այնպիսի կողմից, որը հեռավոր անալոգիայի միջոցով հիշեցնում է այնշտայնյան հարաբերականության հատուկ տեսության «երկարության կրճատում» երևույթը:

Այսպես, ուրեմն, դնում ենք *շարժվող* մարմնի երկարության հարցը. համաձայն հարաբերականության սկզբունքին, որոշակի արագությամբ շարժվող մարմնի ուղղությամբ և նույն արագությամբ շարժվող դիտորդի (շարժվող համակարգ) չափած երկարությունը հավասար է հանգիստ վիճակում գտնվող միևնույն մարմնի և այն հանգիստ վիճակում չափող դիտորդի (հանգիստ, անշարժ համակարգ) երկարությանը, որը նշենք որպես *l*: Սակայն *հանգիստ* համակարգի (մասշտաբի, դիտորդի) պայմաններում շարժվող այդ մարմնի երկարությունը տարբերվում է *l*-ից (մարմնի երկարությունը հանգիստ վիճակում), այն ավելի կարճ է: Այս եզրահանգումը մասնավորապես վերաբերում է լույսի արագությանը մոտ արագություններով շարժվող մարմիններին, օրինակ՝ տարրական մասնիկներին: Ավելի հստակորեն ասած՝ արագության աճի հետ չափաքանկոնը կրճատվում է իր շարժման ուղղությամբ, իսկ լույսի արագությանը հասնելով՝ վերանում է ամբողջությամբ, մինչ ժամանակը զնալով դանդաղում է, իսկ լույսի արագության դեպքում՝ բոլորովին կանգնում: Այսպիսով, մարմնի կինեմատիկական ձևն իր երկրաչափական ձևից տարբերվում է միայն հարաբերական (լույսի արագությանը մոտ) արագության տակ շարժման ուղղությամբ տեղի ունեցած կրճատմամբ¹²:

¹¹ Колмогоров, А. Н., Фомин, С. В. Элементы теории функций и функционального анализа. М., 1989, с. 31.

¹² Эйнштейн, А. Собр. научных трудов. в 4-х т. М., 1965, т. 1, с. 10-13, 73-74.

Այսպիսով, մեծ արագության տակ մարմինները շարժման ուղղությամբ կրճատվում են:

Մենք պատրաստվում ենք անալոգիա անցկացնել Հ. Ա. Լորենցի կողմից, ի պաշտպանություն իր՝ շարժվող մարմինների էլեկտրոդինամիկայի տեսության, հիպոթեզի ձևով առաջարկված և Այնշտայնի կողմից «ժամանակի» գործոնի ճիշտ կիրառմամբ ապացուցված «երկարության կրճատում» երևույթի և վերը մեջբերված գրական տեքստային չափաշխարհում գործող դեպքի միջև, բնականաբար որոշ վերապահումներով՝ առանց մաթեմատիկական ճշգրտության ձգտելու: Բանն այն է, որ մենք ունենք երկու տեքստ, որոնք մարմին չեն, վերացական, մտացածին տարրեր¹³: Վերը նշված այդ տեքստերը միասին վերցրած ներկայացնում են գեղարվեստական գրականության մեջ ամենահազվագյուտ դեպքերից մեկը՝ որոշակի արագության տակ ընթերցվելիս որոշակի տեքստի երկարության ձևափոխման ֆիքսում, այսինքն՝ տրվում է երկրաչափական ու կինեմատիկական ձևերի հարաբերական տարբերությունը: Այդ տեքստերից երկրորդը (կես էջանոց շեղագիրը) իրենից ներկայացնում է առաջինի՝ որը 4-5 էջանոց տասնիններորդ գլխի կինեմատիկական ձևը, որը տարբերվում է իր երկրաչափական ձևից՝ հենց նույն տասնիններորդ գլխի տակ ծավալվող տեքստից, իր երկարությամբ: Նախ ընդունենք հետևյալ պայմանականությունը. համոզիստ համակարգը ինքը էջն է՝ այն տարածությունը, որում տեղադրված է տեքստը, իսկ տեքստը ընդունենք որպես մարմին, տարրական մասնիկ: Որպես տեքստի շարժում համարենք նրա ընթերցումը (որը, դժբախտաբար թե բարեբախտաբար, լուսի արագությանը մոտենալ անկարող է, սակայն գործ ունենք անալոգիայի հետ, այն էլ տեքստային վերացական չափաշխարհում): Տեքստը մեր դիտարկման դեպքում տասնիններորդ գլուխն է, որի երկրաչափական ձևը չափելու համար կարելի է օգտագործել *լեզվական տարրը* (տառ, ստորակետ, գծիկ և այլն) որպես պայմանական չափման միավոր: Համակարգչային Word ծրագրի տվյալներով՝ այդ տեքստը պարունակում է 9524 լեզվական տարր – սա ընդունենք որպես չընթերցված վիճակում մարմնի երկարությունը, երկրաչափական ձևը՝ *Դ*. Երկրորդ տեքստը (շեղագիրը) միաժամանակ և՛ տեքստ է, և՛ այլ տեքստի չափման արդյունք, որը, տվյալ դեպքում մատնանշում է առաջին տեքստի երկարությունն՝ ընթերցվելիս, կամ կինեմատիկական ձևը՝ ի տարբերություն երկրաչափականի, այն է՝ «չընթերցվելիս»: Երկրորդ տեքստի *Դ*-ը, ըստ միևնույն չափող աղբյուրի, 760

¹³ Ինչևիցե, երբ Էռնստ Մախին ասում էին *առումների* մասին, նա հեզմաբար հարցնում էր. «Իսկ դուք դրանք տեսնո՞ւ ե՞ք»:

լեզվական տարր է (տեքստի երկրաչափական տարբերակը): Այս տվյալը միևնույն ժամանակ հանդիսանում է, ինչպես ասվեց վերը, առաջին տեքստի կինեմատիկական ձևի չափման արդյունքը:

Նախնական եզրակացություն. առաջին տեքստի *երկրաչափական ձևը* (չընթերցվելիս՝ իդեալական վիճակը) հավասար է 9524 լեզվական տարրի, իսկ նույն այդ տեքստի *կինեմատիկական ձևը* (ընթերցվելիս) հավասար է 760 լեզվական տարրի (այս թիվը կարող է փոխվել՝ կախված ընթերցանության արագությունից: Տվյալ դեպքում մենք ֆիքսել ենք տեքստի ընթերցանության միլիարդավոր դեպքերից մեկն իր յուրահատուկ, թերևս, անկրկնելի արագությամբ):

Պարզվում է, որ ընթերցվելիս՝ առաջին տեքստը մի քանի անգամ գիջում է իր նախնական /-ին: Տեղի է ունեցել երկարության կրճատում՝ ընթերցման մեծ արագության պայմաններում: Ինչ վերաբերում է երկրորդ տեքստին, ապա, այլ տեքստի չափման արդյունք լինելուց բացի, այն իրենից ներկայացնում է լիարժեք տեքստ իր որոշակի երկրաչափական ձևի մեջ և որևիցե այլ տեքստի միջոցով չֆիքսված իր կինեմատիկական ձևով:

Առաջին հայացքից անալոգիան կարող է թվալ խրթին, իսկ դիտարկումը՝ իսկը սոֆիզմ, սակայն կարող ենք պարզ ասել, որ ակնհայտ են «երկարության կրճատում» երևույթը հիշեցնող գործոնները գրական չափաշխարհում, թեպետ չափազանցված պայմանականությունների վրա հիմնված անալոգիաների միջոցով:

Սրանից հետևում է փոքր-ինչ արբուրդ հնչողություն ունեցող սահմանում.

Հանգիստ համակարգում տեքստերի շարժման (ընթերցման) որոշակի արագությունների, անգամ արագացումների դեպքում տեղի է ունենում տվյալ տեքստի՝ իր ընթերցման ուղղությամբ երկարության կրճատում: Կան տեքստի միմյանցից որակապես տարբերվող առնվազն երկու ձևեր. երկրաչափական (չընթերցվելիս) և կինեմատիկական (ընթերցվելիս):

Կատարված անալոգիան մաս ցայտուն ցույց է տալիս ժամանակի մասին XVIII դ. համար աներևակայելի պատկերացումները, որոնք, ամենայն հավանականությամբ ականա, ի հայտ են եկել ուշ Լուսավորության ներկայացուցիչ Լորենս Ստեռնի հանրահայտ վեպում՝ դրանով իսկ որոշ չափով հիմնավորելով Լայբնիցի կարծիքը այն մասին, որ արվեստը գիտական մտքի նախնական աստիճանն է:

Այլ դիտանկյուն.

Կարելի է կարծել, որ Ստեռնը հատուկ է տվել տեքստերի երկարության այդպիսի ահռելի տարբերություն, որպեսզի լավագույնս արտահայտի իր այն մտահոգությունը, որ արկածների դատարկ որոնումները լուր առավել սրընթաց և հետևաբար տակավին մակերեսային ընթերցանություն են գուժում մման կարգի անարկած գրքի համար: Տիկնոջից հուսահատված՝ Ստեռնը դիմում է տղամարդկանց:

Ես կուզեի, որ տղամարդ ընթերցողները բաց չթողնեն բազում այնպիսի գլաբուլի ու հետաքրքրաշարժ պահեր, ինչպիսին սա էր, որում բռնեցրինք կին-ընթերցողին: Ես կուզեի, որ այս դիպվածն ինչ-որ չափով տեղ հասներ:— և որպեսզի թուր բարի մարդիկ՝ և տղամարդիկ, և կանայք, այս օրինակից դաս քաղելով, կարդալու հետ մեկտեղ նաև մտածեն¹⁴:

Համեմայնդեալս, բացահայտ է Ստեռնին հատուկ հուժուրը վերը դիտարկված դեպքում. արսուրդային արագություն հաղորդելով տիկնոջ ընթերցանությանը, որը մենք զգում ենք դրան համապատասխան անհամեմատ փոքր տեքստային հատվածը կարդալիս, Ստեռնը ցանկանում էր ցույց տալ տիկնոջ մոդայիկ *չափազանց* անուշադիր ու թուլցիկ ընթերցանության տեմպն ու մամանավանդ անարդյունավետությունը:

Այսպիսով, ստեղծագործությունը շարունակում է և, ակնհայտ է, դեռ կշարունակի ծնունդ տալ, դրդել, «արտահղել» թե՛ գրականագիտական և թե՛ փիլիսոփայական արժեք ներկայացնող նորանոր գաղափարներ ու հայեցակետեր, մի հանգամանք, որն ապահովում է ստեղծագործության հարատև և ակտիվ ներկայությունը տարբեր դարաշրջաններում: Մի քանի օրինակի հիման վրա մենք փորձեցինք հանգամանորեն քննարկել այնպիսի ասպեկտներ, որոնք Ստեռնի «Տրիստրամ Շենդի»-ն հանում են որակապես նոր մակարդակ, որը չի հանդուրժում իր մասին գիտափիլիսոփայական ստերեոտիպներ, որոնք բխում են ժամանակի այլ ստեղծագործությունների, մասնավորապես, քրոնոտոպային կոմպոզիցիայից: Չէ՞ որ Ստեռնն ինքն էր ծաղրի ենթարկում բացարձակության ցանկացած դրսևորում և ամեն առիթով մատնանշում երևույթների հարաբերական բնույթը: Այնուամենայնիվ հարկ է նշել, որ մման պիտակումները խթան հանդիսացան, որպեսզի Ստեռնի տեքստում հայտնաբերվեն այնպիսի քրոնոտոպային յուրահատկություններ, որոնք բնորոշ չեն XVIII դարի գիտական մտքի նվաճումներին, մտածելակերպին և, ինչո՞ւ չէ, նաև հենց իրեն՝ Լորենս Ստեռնին: Սրանից ելնելով նշենք. «Այսպես խոսեց Տեքստը». սա է տեքստային դիտարկումների դիպուկ ամփոփումն ու նշանաբանը:

¹⁴ Steme, Laurence, *Op.cit.*, p. 56.